,, Ցամի Տեառն 1888, եւ Հայկական 4380, ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Մակարայ, եւ ի կայսրութեան ամենայն Ռուսաց Գ. Աղեքսանդրի, տնօրէնութեամբ Առաջնորդի Հայոց թեմին Տամախուոյ Մեսրովբ Արքեպիսկոպոսի Սմբատեանց Նախիջեւանցւոյ եւ վերակացութեամբ վանահօր Սուրբ Ստեփաննոսի վանից Սաղիանի Ստեփաննոս քահանայի Աստապատցւոյ՝ շինեցաւ առաջնորդարանս արդեամբք Բագուաբնակ պ. Կարապետ աղայի Լալաեանց, և յարգոյ եղբարց Բուդաղեանց, Ադամեանց, Մելիքեանց, Ասլանեանց, Եղիազարեանց եւայլոց։

Այս ամեն շինութեանց համար՝ յետ բոլորովին աւարտելոյն, ըստ պարտուց պաշտամանս հաղորդեցի Վեհ. Կաթուղիկոսին այս 1889 թուի մայիսի 30, հմ. 150 յայտարարութեամբս որ ըստ այսմ։

Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. ՄԱԿԱՐԱՑ

,, Ցանկանալով ուրախ առնել զսիրտ Հօրդ հասարակաց բարի բարի համբաւուք, ընդ նմին և ծանօթս առնել բարեպաշտութեան Բագուաբնակ Հայոց և առանձնապէս մեծապատիւ Բուդաղեան եղբարց, խոնարհաբար յայտ առնեմ, թէ յայսմ ամի վերջացաւ շինութիւն սենեկաց սուրբ Ստեփաննոսի վանից Սաղիանի, սկսեալն յանցեալ ամէ հետէ մերձաւոր հրկոդութեամբ իմով և վերակացութեամբ վանահօր այնր վանից արժանապատիւ Ստեփաննոս քահանայի, որոյ շինութեան ծախքն ըստ ճիշդ հաշուապահութեան հասեալ է ց2185 ռուբ-